Հայտարարություն

«ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Ղ.Ալիշանի անվան թիվ 27 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար

ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի 6-րդ և 7-րդ կետերի համաձայն՝ <<ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Ղ. Ալիշանի անվան թիվ 27 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղն զբաղեցնելու համար:

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) ՀՀ քաղաքացիությունը.

2) ՈՒսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):

2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

- Դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով.
- Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.
- Հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.
- Տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով.
- ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են «ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Ղ.Ալիշանի անվան թիվ 27 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում **2021 թվականի նոյեմբերի 22 -ից մինչև դեկտեմբերի 10 -ը ներառյալ,** ամեն օր՝ ժամը 10.00 -ից մինչև ժամը 16.00 -ն, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2021 թվականի դեկտեմբերի 24-ին՝ ժամը 12.00-ին,** «ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Ղ.Ալիշանի անվան թիվ 27 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում /ք.Վանաձոր , Տարոն-4 թաղամաս,Զեյթունի փողոց 3/4/:

Տեղեկությունների համար դիմել կառավարման խորհրդի անդամներ Լիլիթ Մելքոնյանին /094396249 lilit-melkonyan75@mail.ru/ կամ Մարիետա Քոչարյանին /096800645 nice.hovhanisyan@mail.ru/: